# Սահմաններ դիր

Դու ունես հակառակ սեռի ընկերներ, և դրա մեջ սխալ բան չկա: Բայց սխալ կլինի, եթե ոչ միտումնավոր այնպիսի վարք դրսևորես, որ նրանցից մեկը սկսի մտածել, թե դու առանձնահատուկ հետաքրքրություն ես ցույց տալիս իր հանդեպ, մինչդեռ դու մտերմություն անելու նպատակ չունես: Ի՞նչ կարող ես անել, որ նման բան չլինի:

Սահմաններ դիր: Որպեսզի կարողանաս դա անել, կարդա հետևյալ իրական պատմությունները և պատասխանիր դրանց վերջում տրված հարցերին:



## ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**«Նա մտածում էր, թե ես միտքս փոխել եմ»**

Մի երիտասարդ, որի անունը Ջեյսոն է, և մի աղջիկ մտերիմ ընկերներ էին: «Մենք ասել էինք իրար, որ պարզապես ընկերներ ենք»,— պատմում է նա: Սակայն Ջեյսոնը շարունակ հաղորդագրություն էր ուղարկում այդ աղջկան և առիթներ էր փնտրում նրան հանդիպելու: «Դա սխալ էր,— ասում է Ջեյսոնը:— Նա մտածում էր, թե ես միտքս փոխել եմ և ուզում եմ հասկացնել դա նրան»:

Ինչո՞ւ աղջիկը մտածեց, թե Ջեյսոնը հետաքրքրություն է ցույց տալիս իր հանդեպ, այն դեպքում, երբ նրանք արդեն խոսել էին իրենց փոխհարաբերությունների մասին:

______________________________

______________________________

______________________________

______________________________

Ի՞նչ սահմաններ կարող էր Ջեյսոնը դնել, որպեսզի պահպաներ իրենց ընկերությունը և այնպիսի *տպավորություն չստեղծեր*, թե ռոմանտիկ հետաքրքրություն է ցույց տալիս նրա հանդեպ:

______________________________

______________________________

______________________________

______________________________

**«Եթե աղջիկը սոցիալական ցանցում «լայք» է դնում իմ բոլոր լուսանկարների համար, ես սկսում եմ մտածել, որ նա հետաքրքրված է ինձանով» (Ստիվեն):**



www.jw.org © 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania

# ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹ-ՅՈՒՆ

**«Նա ասաց, որ ես խաղացել եմ նրա զգացմունքների հետ»**

Անետը և մի երիտասարդ սկսեցին շփվել իրար հետ: Անետը այժմ ընդունում է, որ իրենք չափից շատ էին շփվում: Նա պատմում է. «Ինձ համար նա լավ ընկեր էր: Մենք միասին շատ ժամանակ էինք անցկացնում, բայց ես նրա նկատմամբ ռոմանտիկ հետաքրքրություն չունեի: Մտածում էի, որ նա էլ ինձնով հետաքրքրված չէ: Որոշ ժամանակ անց նա հարցրեց ինձ, թե չեմ ուզի արդյոք ընկերություն անել իր հետ: Երբ ասացի, որ նա պարզապես ընկեր է ինձ համար, նա վրդովվեց ու ասաց, որ ես խաղացել եմ նրա զգացմունքների հետ և դա արել եմ գիտակցաբար»:

Ի՞նչ ես կարծում՝ այդ տղան հիմք ունե՞ր մտածելու, որ Անետը զգացմունքներ ունի իր նկատմամբ: Ինչո՞ւ ես այդպես պատասխանում:

____________________

____________________

____________________

____________________



Ի՞նչ սահմաններ կարող էր Անետը դնել, որպեսզի այդ իրավիճակը չստեղծվեր:

____________________

____________________

____________________

____________________

**«Այսպիսի դարձվածք կա. «Ինչ թույլ ես տալիս, այն էլ շարունակվում է»: Միայն ֆլիրտ անելով չէ, որ կարելի է սխալ տպավորություն թողնել: Երբեմն պարզապես թույլ տալով, որ ինչ-որ մեկը քո հանդեպ հետաքրքրություն ցույց տա՝ սխալ տպավորություն կթողնես» (Քարեն):**



www.jw.org © 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania

# ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## «Մենք միշտ երկուսով էինք»

Ռեյչլին թվում էր, թե մի տղա իր նկատմամբ ռոմանտիկ հետաքրքրություն է ցույց տալիս: «Բոլորը տեսնում էին, որ մենք միշտ երկուսով էինք,— ասում է նա:— Մի անգամ նա նույնիսկ մի ձեռքով գրկեց իմ իրանը: Ես մտածեցի, որ նա զգացմունքներ ունի իմ նկատմամբ, բայց երբ հարցրի մեր փոխհարաբերությունների մասին, ասաց, որ ես նրա համար պարզապես ընկեր եմ, ոչ ավելին»:



Ռեյչլը հիմք ունե՞ր մտածելու, որ այդ տղան հետաքրքրված է իրենով: Ինչո՞ւ ես այդպես պատասխանում:

______________________________

______________________________

______________________________

______________________________

Ի՞նչ սահմաններ կարող էր դնել տղան, որ այնպիսի տպավորություն չստեղծեր, թե ընկերական փոխհարաբերություններից ավելին է ուզում:

______________________________

______________________________

______________________________

______________________________

**«Գուցե հաճելի է, երբ հակառակ սեռի անհատը հետաքրքրություն է ցույց տալիս քո հանդեպ, և դու թույլ ես տալիս, որ նա անի դա, որպեսզի լավ զգաս քեզ: Բայց հասունություն դրսևորած կլինես, եթե ուրիշների շահը քո շահից վեր դասես և զգույշ լինես, որ ցավ չպատճառես որևէ մեկին» (Բրիթանի):**



www.jw.org © 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania